№ 62 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՑՈՒՆԻՍԻ 4

1892

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՑՈՒՆԻՍԻ 4 № 62

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եւրոպական լուսաւորութիւն և Ղուրան.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ինքնօգնութիւնից զուրկ ժողովուրդ. Նամակ Բագուից. Նամակ Մեծ-Ղարաքլիսայից. Նամակ Զաքաթալայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ս. Կարապետի վանքը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բարոյականութիւնը.

ԵՒՐՕՊԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՂՈՒՐԱՆ

Տարիները և դարերը անցնում են,—և մեր մահմետական ազգաբնակութիւնը մնում է նոյն ինքնահաւան անշարժութեան մէջ, որի մէջ գտնվում էր դարերից ի վեր:

Դրա պատճառները շատ բազադրեալ են. նախ որ ինքն մահմետականութիւնը, կամ աւելի լաւ է ասել՝ Ղուրանը, որպէս բարոյական-փիլիսոփայական վարդապետութիւն, իր ամբողջ էութեամբ կրում է ինքնահաւան անշարժութեան յատկանիշը, երկրորդ որ մահմետականութիւնը, նոյն իսկ իր սուրբ ինքնահաւանութեան մէջ սահմանափակվելով՝ չէ թոյլատրում հաւատացեալներին հետաքրքրվել ուրիշ ազգերի կեանքով, ուսումնասիրել ամբողջ մարդկութեան մտաւոր և բարոյական զարգացման յաջորդական պատմութիւնը. վերջապէս մահմետական աշխարհի մտաւոր կանոնաւոր զարգացման համար արգելաւոր է հանդիսանում արաբական այբենարանը, որը միջոց չէ տալիս մահմետական կրօնը դաւանող ազգերի մէջ գրագիտութեան զարգանալուն....

Համեմատենք երեք կրօնական վարդապետութիւնների հիմնական սկզբունքները. Մահմետականութեան հիմնական սկզբունքը՝ սուրը և անսխալական ինքնահաւանութիւն է, Մովսիսականութեան հիմնական սկզբունքը՝ բռնաւոր եսականութիւն է, վերջապէս Քրիստոնէութեան հիմնական սկզբունքը՝ եղբայրսիրութիւն է և հաւասարութիւն է:

Ամեն մի կրօնական-փիլիսոփայական վարդապետութեան արժէքը երևում է իր ունեցած արդիւնքներից:

Դարերի ընթացքում՝ մահմետականութիւնը դաւանող ազգերը մնում են անշարժ դրութեան մէջ, չեն յարմարվում համամարդկային լուսաւորութեան հետ, շփվելով ճշմարիտ քաղաքակրթութեան հետ՝ անմիջապէս յետ են մղվում, կորչում, անհետանում են, քայքայվում, այլասերվում են: Սակայն խօսեցէք նոյն իսկ ամենալուսաւորված մահմետականի հետ,—և նա կը սկսի հաւատացնել ձեզ որ Ղուրանը ամեն տեսակ լուսաւոր մտքերի աղբիւրն է, որ եթէ նրա պատուէրները ճշգրտութեամբ կատարվէին՝ մահմետականութիւնը աշխարհիս ամենաիդէալական կրօնը կը լիներ և Ղուրանի մէջ ամփոփված վարդապետութիւնը կարող էր մարդկութեան համար փոխարինել համամարդկային քաղաքակրթութեան զարգացման բոլոր արգասիքները....

Եւ այդպիսով մինչդեռ Մահմետականութիւնը իր անսխալական ինքնահաւանութեամբ ստեղծել է երկու հակառաջադիմական փաստաթղթեր՝ ֆանատիկոսութիւն և անշարժութիւն, իսկ Մովսիսականութիւնը իր բռնաւոր եսականութեան շնորհով կորցնել է տուել հրէական ազգին իր, որպէս հասարակական մարմնին, ազգային ամբողջութիւնը, ցիր ու ցան է արել հրէաներին ամբողջ աշխարհի երեսի վրա, որտեղ նրանք ներկայանալով որպէս անհատներ միայն, թէև լուծվել են և լուծվում են ուրիշ ազգերի մէջ, բայց պահպանել են իրանց կրօնական վարդապետութեան հիմնական սկզբունքը, այն է բռնաւոր եսականութիւնը, և ամեն տեղ իրանց հետ ներս են բերել այդ սկզբունքի արդիւնք հանդիսացնող փաստաթղթերը՝ եսականութիւն ու հարստահարութիւնը, միմիայն Քրիստոնէութիւնը իր հիմնական սկզբունքի, եղբայրութեան և հաւասարութեան շնորհով ընդունակ է դարձել միտական առաջադիմութեանը յարմարվելու և նոյն իսկ այդ պատճառով կարողացել է ծնեցնել լայն, ընդարձակ, համամարդկային, միշտ առաջադիմական քաղաքակրթութիւն....

Ամփոփենք մեր ասածները. Մահմետականութեան հիմնական սկզբունքը՝ անսխալական ինքնահաւանութիւն է,—և նա կարողացել է ստեղծել միմիայն ֆանատիկոսութիւն և անշարժութիւն. Մովսիսականութեան հիմնական սկզբունքը՝ բռնաւոր եսականութիւն է,—և նա կարողացել է ստեղծել հրէշաւոր եսականութիւն և հարստահարութիւն. վերջապէս Քրիստոնէութեան հիմնական սկզբունքը՝ եղբայրութիւն, սէր և հաւասարութիւն է,—և միմիայն այդ կրօնական-փիլիսոփայական վարդապետութիւնը կարողացել է ստեղծել միշտ առաջադիմական համամարդկային քաղաքակրթութիւն:

Եւ, ինչպէս ասել է մի քրիստոնեայ հոգևոր, եթէ միւս ազգերը, իր ժամանակին, չուզեցին քրիստոնէութիւնն ընդունած ազգերի հետ միասին մկրտվել մի և նոյն կրօնական աւազանում, նրանք եթէ չեն ուզենայ դատապարտված լինել հասարակական մահվան, ստիպված կը լինեն վերջ ի վերջոյ քրիստոնեայ ազգերի հետ միասին՝ մկրտվել լուսաւորութեան աւազանում....

Ուրիշ ելք չը կայ: Լուսաւորութիւնը անողոքում մի ոյժ է. ով որ մինչև այսօր շարունակում է յանդգնաբար և յամառութեամբ դիմադրել նրա յաղթական ընթացքին՝ կամ կը կործանվի, կամ ստիպված կը լինի խոնարհվել քաղաքակրթութեան ոյժի առջև:

Այն ազգերը, որոնք իրանք անընդունակ եղան ստեղծել քաղաքակրթութիւնը,—նրանք, առանց քրիստոնէութիւնն էլ ընդունելու, վերջ ի վերջոյ նուաճված կը լինեն քրիստոնէութիւնից ծնեցրած քաղաքակրթութեամբ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՆՔՆՕԳՆՈՒԹԻՒՆԻՑ ԶՈՒՐԿ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Խօլէրա Պարսկաստանում, խօլէրա Թուրքեստանում, խօլէրա Մէշէդում, Բէշտում, մինչև անգամ խօլէրա Եւրոպայում.... մի խօսքով որ կողմ հարցնէք՝ խօլէրա, որը առասպելական վիշապի նման՝ բերանը բաց արած՝ պատրաստվում է յարձակում գործել Կովկասի վրա....

Եւ Կովկասի միլիոնաւոր ժողովուրդը, իր հոտած Թիֆլիսով, կեղտոտ Երևանով, ապականված Նախիջևանով, նեխված և հոտած Մերվով, Ասխաբադով, վախկոտ Նապաստակի նման, դողալով և սարսափով սպասում է, որ ահա այսօր կամ վաղը, այս ժամին չէ միւս ժամին, հեռագիրը կը դուժէ, թէ խօլէրան սկսեց իր կոտորածը....

Եւ ինչ կոտորած.... Տերը մի արասցէ, եթէ այդ սարսափելի հիւանդութիւնը ոտք դնէ մեր երկրում, այժմեան չոքերի ժամանակ, որպիսին վաղուց չեն յիշում Թիֆլիսի բնակիչները, այն ժամանակ դոհերի թիւը պէտք է հաշուել ոչ թէ տասնեակներով, այլ հարիւրներով....

Ամենքն էլ այժմանից ախ ու վախ են անում, դողում, սոսկում են, անիծում են Պարսկաստանը, Թուրքեստանը, Թուրքիան՝ որտեղից խօլէրան պարբերաբար մեզ հիւր է գալիս,—բայց ոչոք չէ մտածում ինքնապաշտպանութեան մասին, ոչ ոք նախապատրաստական միջոցներ ձեռք չէ առնում, ոչ ոք իր պարտքը չէ կատարում....

Ինքն ժողովուրդը, սկսած Թիֆլիսի լուսաւորված հասարակութիւնից մինչև յետին քաղաքի և գիւղի տգէտ ամբոխը, ձեռքերը ծալած նստել են, և իրանց յոյսը դրել են նահանգապետների, գաւառապետների և պօլիցիականների վրա....

Ոչ ոք իր տունը չէ մաքրում, իր բակի կեղտոտութիւնները դուրս չէ տանում, ամբողջ թաղերը մնում են կեղտի մէջ թաղված, փողոցները ապականված, հիւրանոցները հոտած, խանութները նեխված, ոչ ոք իր բնակարանը դէզինֆեկցիայի չէ ենթարկում, ամենքն էլ թագցնում են պօլիցիայից իրանց տների կեղտերը և անմաքրութիւնները, ոչ բժիշկն է խորհուրդ տալիս, ոչ հասարակական հիմնարկութիւններն են իրանց պարտքը կատարում, ոչ մի բժիշկ միջոց չէ ցոյց տալիս տգէտ ժողովրդին՝ գլխով, բրոշիւրով կամ յօդուածով, մի խօսքով ամենքն էր քնած, ձեռքերը ծալած նստել են, և յոյսները դրել պօլիցիայի վրա, որ նա գնա, տեսնի, մաքրի...

Ահա ձեզ մի ամբողջ երկիր, մի ամբողջ ժողովուրդ, որի մէջ մարել է ինքնօգնութեան վերջին կայծը, որի յիշողութիւնից և սրտից վերջնականապէս արտաքսված է ինքնապաշտպանութեան գաղափարը, և որը ոչ թէ միայն գողութեան, հրդեհի, կռւի և աւազակութեան, այլ նոյն իսկ խօլէրայի, համաճարակ հիւանդութեան ժամանակ՝ իր յոյսը դնում է պօլիցիայի վրա, ասելով «պօլիցիայի պարտքն է, թող հսկի»:

Խ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Լեռուբնօ)

Քանի մարդկային ոգին զարգանում է, այնքան աւելի նա ազատվում է այն մոլութիւններից, որոնցից նա արբշիռ էր եղել դարերից ի վեր իր առաջին երիտասարդութիւնից սկսած: Մարդկային ցեղը չը գիտէ դեռ թէ ուր է գնում, բայց նա անդիտակ չէ թէ որտեղից է գալիս: Ցայտնի բանաստեղծութիւնը թէ՝—«Մարդս մի անկեալ աստուած է, որ դեռ յիշում է երկնքի մասին»—այժմ մեզ ծիծաղեցնում է, որովհետև այժմ յայտնի է, որ մարդուս ծագումը շատ խոնարհ է եղել երկնքից. հեշտութեամբ չէ եղել նրա անասնականութիւնից ազատվելը և ոտքից մինչև գլուխ նա դեռ կրում է անասնութեան հետքեր—այդ խեղճ կիսաստուածը...

Ահա այդպիսի կոպիտ հիմքի վրա է, որ պատուաստվել են մարդկային ամենալաւ յատկութիւնները, նոյն իսկ նրանք, որոնց ծագումը թաղված է հազարաւոր տարիներով հաւաքված մտաֆիզիկական խաւարի մէջ: Տեսակների (espèce) մի քանի փառաւոր նմուշների մէջ կատարելապէս ծաղկած յատկութիւնները մեզ շլացնում են և սակայն նրանք ոչ այլ ինչ են, եթէ ոչ իմացականութեան երևոյթների ընդլայնումն (amplification de phénomènes de conscience), որոնք շատ սովորական են նաև անասունների մէջ: Այդպէս են նաև բարոյական այն զգացմունքները, որոնք, ըստ պաշտօնական փիլիսոփաների—միմիայն մարդուն են յատուկ...

Մի ուրիշ տեղում *) մենք արդէն ասել ենք, որ ներվային խցիկները (cellules nerveuses) արձանագրողների պաշտօն վարելով, պահում են իրանց վրա գրված՝ մօլեկիւլների այն թրթռումները, որոնց ենթարկվում են. ասել ենք նաև թէ ինչպէս այս դաշնակաւոր թրթռումները վերակենդանանում և վերածնում են ամեն անգամ և այնքան հեշտութեամբ, որ յաճախ յայտնում են իրանց ներկայութիւնը: Այդ տպաւորութիւնները շատ անգամ անգիտակցական են. օրինակ, ողնածուծը հէնց այդպէս անգիտակցաբար է, որ արձանագրում է իր սելիւլների (խորշերը) մէջ՝ շարժումները: Երևոյթը աւելի նկատելի է լինում որոշ ողնայարաւոր (vértébré) կենդանիների մէջ, որոնք ժառանգական կրթութեան շնորհով (ինչ որ կոչում են ինստինկտ) այնպէս դժուար գործողութիւններ են կատարում անգիտակցաբար, որ առաջին տեսնելիս մարդ ուզում է նրանց մի բարոյական արժէք յատկացնել:

Եթէ որդերը (միջատ) իրանց թառերի մօտ փիլիսոփայութեան պրոֆէսորներ ունենային, մենք անպատճառ գլուխ տրաքեցնելու չափ փիլիսոփայական գրուածքներ կունենայինք կարդալու այն բանի մասին, թէ ինչպէս liparis chrysorrhoca չերամի էգը ձու ածելուց յետոյ խնամքով նրանց փաթաթում է անթափանցիկ մի գործուածքի մէջ՝ և այդ գործուածքը նա պատրաստում է մէկ կամ երկու օրվայ ընթացքում, պոկտելով իր մարմնի բոլոր մազերը *):

Գործողութիւնը, ինչպէս տեսնում էք, շատ անգութ է և խիստ և չերամը դրանից մեռնում է, բայց մի փոքրիկ հասկացողութիւն իսկ չունի այն նպատակի մասին, որին ինքը զոհ է գնում, քանի որ ոչ ինքը իր մօրը ճանաչել է և ոչ էլ իր որդիներին է տեսնելու. նա մեքենապէս ենթարկվում է մի այնպիսի ինքնաբերական (automatique) սովորութեան, որը ընտրականութեան (selection, подборъ) համար գործողութիւնը թողել է իր տեսակների մէջ:

Մարդկային ուղեղի մէջ ևս բարոյական ինստինկտները հէնց այդպէս են կազմակերպվում: Զանազան ազդեցութիւնների յարատև ճնշման տակ, բարոյական սովորութիւնները տպաւորվում են և յաճախ ժառանգական դառնում—սերնդից սերունդ անցնում: Դրանից է, որ շատ հանգամանքներում մի ներքին «ձայն»—մեր նախնիքների ձայնը մեզ գոչում է՝ անելու այս ինչ բանը կամ խուսափելու այն ինչ բանից և այդ լինում է յաճախ շատ քիչ տրամաբանելով և երբեմն էլ լիովին առանց տրամաբանութեան:

Ահա այդպէս են գոյանում բարոյական, պարտաւորութեան և այլն զգացմունքները, որոնք երբեմն մեզ հիացնում են երբ, օրինակ, մի Վինկելրիդ (շվեյցարական մի հերոս) իրան զոհում է իր հայրենիքի համար... որի օրինակը հեշտութեամբ կարելի է գտնել մի քանի անասունների և ամենավայրենի ազգերի մէջ անգամ:

Այս տեսակէտով ամենից հետաքրքիրն է քննել չունը, որին մարդս աջողվել է ենթարկել այնպիսի սովորութիւնների, որ հակառակ է նրան բնաւորութեան:

Առանց կրթված լինելու, այդ անասուններից մի քանիսը հէնց առաջին անգամ որսի ելնելիս՝ սկսում են դարանի մտնել որսի ետևից, իսկ մլուսները նոյն իսկ բնազդմամբ վազում են ընկած որսը բերում: Նկատված է նաև, որ հոլուական մի նոր շուն, առաջին անգամ հօտի մէջ մտած ժամանակ թէև անորոշ քայլերով, բայց սկսում է պատշաճ գործել հօտի շուրջը, ինչպէս անում են բոլոր պահապան շները:

Ինչից է որ այս անասունների նորածինները, իրանց վայրենի նախնիքների բնաւորութեան հակառակ, ծննդեան օրից կրում են այդպիսի եղակի յատկութիւններ: Որովհետև մարդկային տիրապետութիւնը երկար ժամանակ պատիժներով և վարձատրութիւններով վարժեցրել է այժմեան շների նախնիքներին՝ հնազանդվել հրամաններին և այդ արել է մարդս այնպիսի խստութեամբ, որ սովորութիւնը տպաւորվելով անասունի ուղեղի

---

*) Լեռուբնօ. «Գիտութիւն և մատերիալիզմ» գրքի մէջ:

*) Հուզօ «Ուսումնասիրութիւն անասունների մտային յատկութիւնների մասին» հատ. II. եր. 483:

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Մայիսի 28-ին

Մայիսի 24-ին հասարակական այգիում նշանակված ժողովրդական զբօսանքից, յօգուտ Մարդասիրական ընկերութեան, ընդհանուր մուտք եղաւ 2960 ր.։ Այդ առաջին զբօսանքն է «Մարդասիրական ընկերութեան» օգտին, որի գլուխ բերելուն համար պարտական ենք նոյն ընկերութեան նախագահ պ. Դօլուխանեանցի ջանքերին։

Ը նայելով որ այդ օր ամբոխի ահագին բազմութիւն զուարճացել էր օդապարիկով թռչող պ. Գօրչօնի աջող թռիչքով և վարձատրել նրան մինչ 600 ռուբլի գրամով, չը նայելով որ ռուս արիսաօկրատիան հրաւիրված էր պ. Նահանգապետի մօտ, բայց և այնպէս այդիում հաւաքված համարեա թէ զուտ հայ հասարակութիւնը գործը անսպասելի կերպով աջողեցրեց։ Եթէ այս դրամական տագնապի մէջ այդ ճանապարհով ընկերութիւնը կարողացաւ ստանալ մինչ 3,000 ռուբլի պատկառելի գումարը, ապա պէտք է յուսալ, որ աջողութեան տարիներում աւելին կարելի կը լինի սպասել։

Այդպիսով մեր այժմեան նախագահի օրով կատարվում է երեք արժանաւոր գործ։ Առաջինը նորաշէն դպրոցի շինութեան գլուխ բերելը, երկրորդ՝ մեր հին դպրոցի նշանաւոր վերանորոգութիւնը և երրորդ՝ «Մարդասիրական ընկերութեան» համար ժողովրդական զբօսանքի աջողեցնելու գործը, որով այսուհետև կարելի կը լինի յուսալ, որ ընկերութիւնը տարեկան մինչ 3,000 ռուբլի աւելի եկամուտ կունենայ, մի գործ, որ նախորդ նախագահների օրով անիրագործելի էր համարվում։

Մնում է մեզ յուսալ, որ Մարդասիրական ընկերութեան նորաշէն ուսումնարանի առաջին գահլիճը կը յարմարեցվի հայկական ներկայացումների համար, որը մեծ պատիւ կը բերի ընկերութեան։

Այսօր, մայիսի 28-ին, մեր նաւթատէրերի մեծ ժողովն է, մասնակցութեամբ Նոբելի և Բոռշիլդի ներկայացուցիչների։ Ժողովի նպատակն է միանալ և հնար գտնել այդ ճգնաժամից ազատվելու համար։

Օրերումս ձերբակալված են 12 մարդիկ, Զօրութ գիւղացիներ, որոնք զինաւորված մի քանի յարձակումներ են գործել Ղուբա տանող ճանապարհի երթևեկողների վրա. 13-րդը փախել է և յոյս կայ, որ կը բռնվի. քննութիւն է կատարվում։

Քարոզիչ Կիւրեղ վարդապետը այժմ շրջում է Շամախու գիւղերում։ Ցանկալի է իմանալ թէ գիւղացիներին ձմեռն է հարկաւոր քարոզիչը թէ ամառը, երբ գիւղացիները արդէն սկսում են իրանց գործերը։ Իսկ ամբողջ ձմեռը ինչ գործ ունէր քարոզիչ հայր սուրբը Բաղումի. մի և նոյն է, ժողովուրդը նրա քարոզները լսելու համար չէր յաճախում եկեղեցի, որովհետև նրան չէին հասկանում։ Արդ հարցնում ենք., եթէ քաղաքացին չէր հասկանում հ. Կիւրեղի քարոզները, ինչ պէտք է հասկանայ Շամախու հայ գիւղացին, որ ոչ ուսումնարան ունի, ոչ իր օրում քարոզ է լսել։ Միթէ ճշմարիտ էջմիածինը չունի մի քանի ազգի լաւ քարոզիչներ։ Մի այնպիսի կարևոր տեղում, ինչպիսին է Շամախու գիւղերը, որտեղ բուն են դրել մի քանի աղանդներ, արդեօք լաւ չէր լինի ուղարկել հնարաւոր քարոզիչ հայր Ստեփանէին։

Ֆ. Ա.

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱԳԼԻՍԱՅԻՑ

Մայիսի 26-ին

Սրանից մի ամիս առաջ Ղարաքլիսայի արևելեան կողմում, թագաւորանիստ տված տարի լանջում, մի երկրագործ, հողը վարելու ժամանակ տեսնում է, որ եզան ոտը անսպասելի կերպով խորն ընկաւ. մի կերպ եզներին հեռացնում է այդտեղից և յայտնում է իր դրացիներին քանի էութիւնը։ Մարդիկ հաւաքվում են և սկսում քանդել եզան ոտն ընկած տեղը։ Երկու արշին լայնութեամբ և մէկ սաժէն խորութեամբ ածած թոյլ հողը դուրս տալուց յետոյ, հողով լի երեք ատրերկրեայ անցք է բացվում։ Սարի կազմութիւնը բաղկացած է փիրոն չէկ գոյն ժայռից, որից հասկացվում է ատրերկրեայ անցքերի գոյութիւն ունենալը։

Երեք մարդիկ պայմանաւորվելով միմեանց հետ սկսում են անցքերը փորել և առաջ գնալ։ Մի քանի քայլի վրա դուրս է գալիս մի կնոճ (պուլիկ) դեղնագոյն հողով լի, մի փոքր էլ փորելուց յետոյ՝ դուրս է գալիս մէկ հունտաչափ հանք (ջուհար) դեղնագոյն հողով խառը։ Մի փոքր էլ և ահա անցքը ուղղահայեաց դէպի երկրի սիրտն է իջնում. հողը դուրս տալով մէկ արշինաչափ և ահա մի հոր՝ յատակը քիրաչի շաղախով ծեփած. այդտեղից դուրս են գալիս մի քանի յետի չափ գեաքարեր՝ մէջն արհեստական կերպով փոս արած և նմանեցրած ոսկերչի հալոց քարին։ Այս նշաններից յետոյ, կողմնակի մարդկանց խորհրդով, յայտնում են պօլիցիային և դադարացնելով գործի շարունակութիւնը սպասում են պօլիցիայից թոյլտուութեան։ Կարծում են, որ յիշեալ սարի կրծքում ընդարձակ շինութիւններ լինեն։ Սարն իր անուանը պէտք է որ հին ժամանակ ծառայած լինի. հետևանքի մասին կը հաղորդենք։

Ցեղիս զօրքը տեղափոխվեց Ղարս։ Այժմ Ղարաքլիսայի առևտուրը զգալի կերպով ընկաւ. ասում են որ նորից Ղազախի գունդն է նշանակված Ղարաքլիսայում և շրջակայ գիւղերում բնակվելու համար։

Բոլոր գանձակեցիք, մանաւանդ երկրագործ դասը ուրախութեամբ միմեանց հաղորդեցին այդ լուրը։ Ասում են որ՝ չաթը և երեք վաշտ Ղարաքլիսայում են մնալու, իսկ մնացեալը բաժանելու են շրջակայ գիւղերում։ Փամբակի հողի անբերրիութիւնը արդէն յայտնի է ամենքին. աղգաբնակութիւնը մեծ մասամբ զբաղվում է սայլապանութեամբ, անասնապահութեամբ և առևտրով. հետևապէս փամբակում զօրք լինելը բնակիչների համար դառել է անպայման պահանջ, առանց որի շատ դժուար կարելի է եօլա գնալ։ Ասածիս մի ապացոյց կարող է լինել հետևեալը. զօրք եղած ժամանակ, երբ սկսում են արքունական հարկը հաւաքել, չէ անցնում երկու շաբաթ և ահա պատրաստ է. այդպէս էլ ուրիշ պահանջներ. իսկ զօրք չեղած ժամանակ, ամիսներ են անցնում, հարկահանը դռնէ դուռ ընկած գոռում, գոչում, հայհոյում է, բայց աղքատ գիւղացուց անկարող լինելով դրամ ստանալ՝ ստիպված կամ կապերտը կամ պղինձը կամ նոյն իսկ տեղաշորը ուժով առնում, տանում, անուրդով ծախում է և հարկը դրատում։

Ղարաքիլիսա, ինչպէս ամարանոց, կամաց-կամաց յայտնի է լինում ամենքին իր Վանաձորի ջրով և հիւանդներին կենդանութիւն տուող կլիմայով։ Զօրքի այստեղից գնալը միջոց տուեց ամարանոց եկողներին մաքուր, առողջապահական պայմաններին համաձայն ընդարձակ պարտիզով սենեակներ վարձել էժան գնով։ Մի խօսքով այստեղ եկողները մնասած կը լինեն թէ իրանց առողջութիւնը և թէ դրպանը։ Փորձված է, որ Ղարաքիլիսա եկողներից, որոնք գալիս են իրանց թռուցած մարմնին այժ տալու, երեք ամիս մնալով տասից մինչև քսան ֆունտ մարմնի ծանրութիւն են վաստակում. ամենավատագոյնը բարակացաւ ունեցող մարդը վեց ֆունտից պակաս չէ դէրանում։ Ինչպէս երևում է եկողներ շատ են լինելու. տների պատրաստութիւններ են տեսնում։

Մ. Ա.

ՆԱՄԱԿ ԶԱՔԱԹԱԼԱՅԻՑ

Մայիսի 24-ին

Զաքաթալայի շրջանը այս տարի կենդանութիւն է ստացել շերամապահութեան կողմից. ոչ մի տարի այնքան սերմ չէ տարածվել գիւղերում և քաղաքներում, ինչպէս այս տարի։ Չափազանցված չենք լինի, եթէ ասենք, որ երեսուն պուդից աւելի սերմ է տարածվել գիւղերում և քաղաքներում։

Վաճառականներ և մասնագէտ անձինք բերել են տուել զանազան տեղերից քննած սերմ և տարածել գիւղացիների մէջ։ Բայց ով կարող է երաշխաւոր լինել, որ այդ քննված համարվող սերմը հիւանդ չէ եղել և ցանկալի արդիւնք կարող է տալ. արդեօք նոյն իսկ սերմ բաժանողներից շատերը, որոնք սերմը գնել և բաժանել են գիւղացիներին, հաստատ հաւատացած են, որ իրանց բաժանած սերմը առողջ է եղել. արդեօք կարող են ասել, որ ցանկալի հետևանքը կը ստանան։ Գուցէ իրանք դրականապէս այո ասեն, սակայն այդ «այո»-ն բաւական կասկածելի է թվում շատերին։ Թող սերմ ծախողները և բաժանողներն իմանան, որ արդիւնաբերութեան այդ բաւական շահաւէտ գործը մէկ կամ երկու տարվայ համար չէ. թող իմանան կեղծողները, եթէ այդպիսիները կան, որ գիւղացիների հաւատը չը պէտք է ի չարը գործ դնել. եթէ մէկ մսխալ սերմից գոնէ 10 ֆունտ բոժոժ ստացվի, ապա 30 պուդ սերմից 28,800 պուդ կը ստացվի և եթէ իւրաքանչիւր պուդը միջին թւով 15 ր. ծախվի, այն ժամանակ 28,800 պուդը մօտ 430,000 ր. փող կանի, որ քիչ բան չէ Զաքաթալայի պէս մի շրջանի համար։

Ցանկալի կը լինէր, որ շերամապահութիւն էլ մեզ մօտ այն օրը չընկնի, ինչ որ 6—7 տարի առաջ ծխախոտի արդիւնաբերութիւն ընկաւ։

Մեզ մօտ է այժմ Գիւղատնտեսական ընկերութեան անդամ պ. Տերեդուլով, որը մի քանի գիւղերում շերամատներ է հիմնել, որպէս զի դրանով գիւղացիներին կանոնաւոր շերամապահութիւն սովորեցնի. տեսնենք ինչպէս կաջողվի նրան այդ մտադրութիւնը։ Աւելորդ չէ աւելացնել և այն, որ այստեղի օրինակելի շերամատան կառավարիչ պ. Գարբալով շրջում է գիւղերը, իր խորհուրդներով օգնում է նրանց և քննում որդները։ Սակայն ինչպէս ասում են, մի քանի տեղերում քննված համարվող սերմը հիւանդ է գտել։

Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց Վենեցիայում տպված մի հետաքրքրական աշխատութիւն, «Ընտիր Հայկազունք» վերնագրով, աշխատութիւն Յով. վ. Թորոս։ Սա երկրորդ տպագրութիւնն է։ Այս գրքի մէջ մտել են հայոց պատմութեան մէջ չատ նշանաւոր հոգևորական և աշխարհական անձինք։ Կենսագրութիւններին կցված են և պատկերներ։

—

Նորերումս Վիէննայում լոյս տեսաւ Կղեմէնս վ. Սիպիլեանի մի պատկառելի հետազօտութիւնը, որ կրում է «Դասաւորութիւն Ռուբինեան դրամոց» վերնագիրը, և որը Ռուբինեան հայ թագաւորների կողմից գործածութեան մէջ մտցրած դրամների ուսումնասիրութիւն է։ Աշխատասիրողը այդ հարցով զբաղվել է երկար տարիներ և իր ձեռքի տակ ունեցել է հազարաւոր դրամներ Ռուբինեանց ժամանակից։ Գրքին կցված են չատ դրամների նկարներ, նոյնպէս և հեղինակի պատկերը։ Սիպիլեան վարդապետը ծնվել է 1824 թվին, և վախճանվել է 1878 թվին։ Նրա ներկայ աշխատութեան հրատարակութիւնը կատարել է Գրիգորիս վ. Գալէմքէրեան։ Գրքի գինն է ճանապարհածախսով միասին 3 ռուբլի։

—

ՆԱՄԱԿ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Մայիսի 24-ին

Մայիսի 24-ին հասարակական այգիում նշանակված ժողովրդական զբօսանքից, յօգուտ Մարդասիրական ընկերութեան, ընդհանուր մուտք եղաւ 2960 ր.։ Այդ առաջին զբօսանքն է «Մարդասիրական ընկերութեան» օգտին, որի գլուխ բերելուն համար պարտական ենք նոյն ընկերութեան նախագահ պ. Դօլուխանեանցի ջանքերին։

Ը նայելով որ այդ օր ամբոխի ահագին բազմութիւն զուարճացել էր օդապարիկով թռչող պ. Գօրչօնի աջող թռիչքով և վարձատրել նրան մինչ 600 ռուբլի գրամով, չը նայելով որ ռուս արիսաօկրատիան հրաւիրված էր պ. Նահանգապետի մօտ, բայց և այնպէս այդիում հաւաքված համարեա թէ զուտ հայ հասարակութիւնը գործը անսպասելի կերպով աջողեցրեց։ Եթէ այս դրամական տագնապի մէջ այդ ճանապարհով ընկերութիւնը կարողացաւ ստանալ մինչ 3,000 ռուբլի պատկառելի գումարը, ապա պէտք է յուսալ, որ աջողութեան տարիներում աւելին կարելի կը լինի սպասել։

Այդպիսով մեր այժմեան նախագահի օրով կատարվում է երեք արժանաւոր գործ։ Առաջինը նորաշէն դպրոցի շինութեան գլուխ բերելը, երկրորդ՝ մեր հին դպրոցի նշանաւոր վերանորոգութիւնը և երրորդ՝ «Մարդասիրական ընկերութեան» համար ժողովրդական զբօսանքի աջողեցնելու գործը, որով այսուհետև կարելի կը լինի յուսալ, որ ընկերութիւնը տարեկան մինչ 3,000 ռուբլի աւելի եկամուտ կունենայ, մի գործ, որ նախորդ նախագահների օրով անիրագործելի էր համարվում։

Մնում է մեզ յուսալ, որ Մարդասիրական ընկերութեան նորաշէն ուսումնարանի առաջին գահլիճը կը յարմարեցվի հայկական ներկայացումների համար, որը մեծ պատիւ կը բերի ընկերութեան։

Այսօր, մայիսի 28-ին, մեր նաւթատէրերի մեծ ժողովն է, մասնակցութեամբ Նոբելի և Բոռշիլդի ներկայացուցիչների։ Ժողովի նպատակն է միանալ և հնար գտնել այդ ճգնաժամից ազատվելու համար։

Օրերումս ձերբակալված են 12 մարդիկ, Զօրութ գիւղացիներ, որոնք զինաւորված մի քանի յարձակումներ են գործել Ղուբա տանող ճանապարհի երթևեկողների վրա. 13-րդը փախել է և յոյս կայ, որ կը բռնվի. քննութիւն է կատարվում։

Քարոզիչ Կիւրեղ վարդապետը այժմ շրջում է Շամախու գիւղերում։ Ցանկալի է իմանալ թէ գիւղացիներին ձմեռն է հարկաւոր քարոզիչը թէ ամառը, երբ գիւղացիները արդէն սկսում են իրանց գործերը։ Իսկ ամբողջ ձմեռը ինչ գործ ունէր քարոզիչ հայր սուրբը Բաղումի. մի և նոյն է,

---

վրա, դարձել է նրա մէջ բնաւորութիւն և այդ բնաւորութիւնը ժառանգաբար անցել է իր սերունդներին։ Մի անգամ այդ բնաւորումը լաւ արմատ ձգելով ներվերի խորշերի մէջ, այնտեղ տեր է լինում և անասունը այնուհետև հաճոյքով է՝ որ իրան նուիրում է այդ անգիտակցական մղման հոսանքին, որին դիմադրելը՝ նրան մեծ ցաւ ու տանջանք է պատճառում։

Եթէ նայենք այս իրականութիւնների վրա խորապէս, չէ՞ որ կարելի է ասել թէ դա մի տեսակ բարոյականութիւն է, ի հարկէ, դեռ չատ ստոր, քանի որ անասունը երբէք չէ մտածում իր գործողութիւնների նպատակի մասին և հասկացողութիւն իսկ չունի իր մեքենական այդպիսի հակումների վրա։ Նա նրանց հետևում է, որովհետև իրը պրինցիպ՝ ունի իրան համար միմիայն մի քանի սերունդ իր տեսակների վրա ճնշող տերերի կամքը։

Այս տեսակ ցած բարոյականութեան օրինակներ հաղուագիւտ չեն մարդկային տեսակի մէջ իսկ։ Չէ՞ որ բռնապետական երկրներում, միայն տիրոջ կապրիզի գործադրութիւնն է, որ հպատակների մէջ բարոյական արժէք ունի։ Այդպիսի երկրներում բռնակալի հաճոյքը նկատված է իրը բարոյական պարտք և ինչ որ հաճելի չէ բռնակալին, իրը չարագործութիւն կամ անբարոյականութիւն. և եթէ այդ տեսակ ըէժիմը տեւել է մի քանի երկար դարեր, այն ժամանակ ամենագծուծ ստրկութիւնը նկատված է հպատակների մէջ՝ իրը բարոյական զգացմունք, պարտք... օրինակ. Բիրմանիայում, Սիամում, Թիւրքիայում և այլն։ Մուհամեդականների մէջ։ Այդ նուիրական մսից ուտելը սաստիկ արգելված է երիտասարդներին—դա նըկատված է իրը հակա-բարոյական գործողութիւն։ Եւ այդպէս, այդ արգելքը գործադրված լինելով զարերից ի վեր, սերունդ առ սերունդ, ծնեցրել է աստրալիացու մէջ մի տեսակ պարտք, որը ընդունակ է դարձել. աստրալիացին քիչ է տրամաբանում առհասարակ։ Բայց մարդկային մարմինը թոյլ է և քաղցածութիւնն աւելի զօրեղ. և ահա պատահում է երբեմն, որ մի երիտասարդ ընակութիւնից հեռու ոտալու ժամանակ չէ կարողանում դիմանալ և բռնաբարում է էմուի օրէնքը և ուտում է նրա միսը. իսկ յետոյ, երբ նա կշտացել է, իսկոյն բարոյական ինստինկտը զարթնում է նրա մէջ. նա տանջվում է, մրցնում է իր խմացականութեան մէջ մի ձայն, որ գոչում է իրան. «դու էմուի միս կերար». բոլորովին նեղված խայթից, նա գալիս է տուն. լուռ և տխուր քաշվում է մի անկիւն և իր վարմունքը իսկ բաւական է մատնելու ոճիրը, եթէ, ինչպէս յաճախ է լինում, նա ինքը չէ գնում խոստովանվելու յանցանքը և կրելու պատիժը *)։ Ճանապարհորդ Ստիւրդին ենք պարտական այս հետաքրքիր ծանօթութիւնը, բայց շատ ուրիշ օրինակներ էլ են նկատված Աւստրալիայում։ Դրանց մէջ նշանաւոր է աւստրալիական վէնդէտտա կոչվող սովորութիւնը։

Մի և նոյն բարքը, որ սահմանել է էմուի օրէնքը, դրել է նաև մի վրէժինդրական կոյր, անիրաւ պարտք իւրաքանչիւր աւստրալիացու ուղղի մէջ։ Եթէ, օրինակ, մի տեղացի նախատինք է կրել մի սպիտակ մարդուց, նա իր վրէժը կը հանի մի ուրիշ առաջին հանդիպած սպիտակից և դա լիովին արդար դատելով՝ դոհ կը լինի։

Աւստրալիացու կարծիքով բնական մահ չէ կարող լինել. ամեն մահ առաջանում է մի չարագործութիւնից և պէտք է վրէժինդիր լինել ուրեմն. զըլանից է, որ իւրաքանչիւր քիկի համար գոյութիւն ունեն մի շարք վրէժինդրական պարտաւորութիւններ։

Մի աւստրալիացի, պատմում է դոկ. Լանդեր *), իր կնոջը կորցնելով, որ մեռել էր հիւանդութիւնից, յայտնեց որ պիտի գնար սպանելու հեռու գտնվող ցեղից մի կին, որպէս զի իր մեռածի հոգին կարողանար հանգստութիւն գտնել։ Նրան արգելեցին ուրօպացիք, սպառնալով բանտարկել։ Բայց հէնց այդ օրից նրա խմացականութիւնը (conscience) դարձաւ մի բարոյական կուբ ասպարէզ. նա դարձաւ տխուր, մելամաղձոտ, չուարած, իրան կորցրած մինչև այն օրը, երբ աջողվեց փախչել բանակից։ Մի քանի օրից յետոյ նա յայտնվեց բոլորովին զուարթ և հանգիստ—նա իր նուիրական պարտքը կատարել էր—սպանել էր մի կին և այժմ հանգիստ էր։

(Կը շարունակվի)

---

*) Արդեօք հայերի մէջ էլ այդպէս չէ։ Ոչքան հասարակական տխմար կարծիքներ կան, որոնք ընկերական «նուիրական պարտք» և կերպարանք են ստացել մի որ և իցէ խաւարամիտ կազմակերպութեան ազդեցութիւնով, որ դարերից ի վեր ճնշել է մեր ուղեղների վրա և ժառանգական բնաւորութիւն դարձրել։

*) Ընդհ. պատմ. ճանապարհորդութիւնների. հատ. XXXIV.

*) Մօդէյ. «Մտքի Ֆիզիօլոգիա» գրքում նշանակված։

Սարատովի շրջը բաւական չէր, անա քաղաքի մէջ դադրեցուած է ջրի ահագին պակասութիւն։ Ջրմանգքում ջուր շատ քիչ կայ։ Եթէ այսպէս շարունակուի, յուլիսին քաղաքը անջուր կը մնայ։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն դիմել է լուսաւորութեան մինիստրութեան, առաջարկելով թոյլատրել, որ ժողովրդական դպրոցների տեսուչները պարբերաբար ժողովներ գումարեն։

—

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՑ. «Մայիսի 30-ին հայ սիրողների խումբը, յօգուտ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան Շուշու ճիւղի, Խանդամիրեանի թատրոնում հայերէն մի ներկայացում տուեց։ Խաղացին Վ. Հիւգոյի «Անջէլօ» դրաման և Մադաթեանի «Կրոթ-Կրոթ» վոդեվիլը։ Բաւական գեղեցիկ կերպով խաղաց տ. Նոնէ Եարամիշեան (Լատիսպ), որը և արժանացաւ հասարակութեան բուռն ծափահարութիւններին։ Նոյնպէս լաւ էին տ. Ջանումեան, պ.պ. Աբրահամեան, Ջանումեան և Գաբրիէլեան։ Դահլիճը կիսով չափ դատարկ էր, այնպէս որ ծախսը և եկամուտը հաւասար էին։ Սիրողներն անա երեք ամիս է աշխատում էին այս ներկայացման գլուխ գալուն, բայց ինչ արած, մեր ժողովուրդը ցիրկի համար տասնամեայներ կը մսի, իսկ թատրոնի համար, այն էլ բարեգործական նպատակով տրուող ներկայացման համար, կը խնայէ մի երկու ռուբլի։»

—

Յօգուտ Բաֆայէլ Պատկանեանի Մանչեստրից, պ. Յ. Անդրէասեանի միջոցով, ստացանք 13 ռուբլի. Մանչեստրի հայերն էին, որ հանգանակել և ուղարկել էին մեզ 52 ոսկի գումար, բանկային արժեթղթով, և որի մասին իր ժամանակին յայտարարել ենք «Մշակի» մէջ։ Նախկին 1350 ր. 45 կոպէկ գումարի վրա աւելացնելով այդ 13 ռուբլին, այժմ ունենք 1363 ր. 45 կոպէկ։

—

Մեզ անդադար գանգատներ են ուղարկում ռուս-հայերէն բառարանը կազմող Աբիսողոմ Յովհաննիսեանի դէմ։ Այդ պարոնը բաժանորդագրութիւն է բացած եղել բառարանի երկու հատորի համար։ Հրատարակել է մի հատորը միայն, և չը նայած որ մի քանի տարի է անցել, լոյս չէ ընծայում երկրորդ հատորը, որի համար չատերից վճարը կանխիկ է ստացել։ Ցանկալի է, որ պ. Յովհաննիսեան մի որ և է միջոցով բառարարութիւն տար իր բաժանորդներին, որով և վերջ տրուած կը լինի անվերջանալի գանգատներին։

—

Մեզ գրում են ՄԵՐՎԻՑ, որ մայիսի 22-ին այնտեղ տեղի ունեցաւ մի ներկայացում, կօնցերտի բաժնով։ Ներկայացման նպատակը բարեգործական էր։

—

Մեզ տեղեկացնում են, որ Թիֆլիսի մի քանի թաղեր, ինչպէս Մէյդան, Անչիսխատի կողմերը, Հաւլաբարը և Մաղնու կողմերը մնում են իրանց նախկին կեղտոտ վիճակի մէջ, չը նայած որ կարգադրված էր մաքրել բոլոր կեղտոտութիւնները։

—

Մեզ հաղորդում են, որ Եվլախ կայարանում երևացած հիւանդութիւնը, ինչպէս երևում է բժշկական քննութիւնից, եղել է ճահճային դող և ոչ թէ ուրիշ՝ աւելի վտանգաւոր հիւանդութիւն։

—

Ռուսաց դրամատիկական խումբը այս օրերս վերջացնում է իր ներկայացումները։ Թատրոնում այնպիսի շոք է լինում, որ այլ ևս անհնարին է շարունակել ներկայացումները։

—

Մեզ տեղեկացնում են, որ Շուշու թեմական դպրոցի համար պէտք է կազմվի վարժապետական նոր խումբ։

—

Մեր լրագրի խմբագիր պ. Գրիգոր Արծրունի երէկ, յունիսի 3-ին, Երևանից վերադարձաւ Թիֆլիս։

—

Այսօր, յունիսի 4-ին, Աղնուականների բանկի թատրոնում երգիչ Ն. Շահլամեան կը տայ իր վերջին կօնցէրտը։ Տոմսակները վաճառվում են Յ. Սուքանաճեանցի երաժշտական մագազինում։

—

Այս օրերս մեր քաղաքն են եկել Թիֆլիսցիներին ծանօթ երգիչ Վարդիկեան-տենօր և երգիչ Պօպովեան-բաս (basso-cantante), որոնք մտադիր են մօտերս մի կօնցէրտ տալ Թիֆլիսում։ Պ.պ. Վարդիկեան և Պօպովեան արդէն երկու տարի է, որ Պետերբուրգում սովորում են երգեցողութիւնը տիկին Էլմօնի մօտ։ Պ. Պօպովեան երգել է Պետերբուրգի մասնաւոր օպերային թատրոններում։ Ցոյս ունենք որ հայ հասարակութիւնը կերթայ լսելու հայ երգիչներին և նրանց կը խրախուսի իր ներկայութեամբ։

—

Մեզ հաղորդում են, որ վերջին ժամանակներս մանաւանդ, Անդրկովկասեան երկաթուղու վրայով երթևեկութիւնը շատացած լինելու պատճառով, վագոններում երբէք տեղ չէ լինում, քանի որ շատ քիչ վագոններ են տրվում վարչութեան կողմից, և այդ պատճառով ճանապարհորդները ստիպված են լինում ժամերով կանգնած մնալ և ահագին նեղութիւններ կրել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ

—

Մի օտարերկրացի ճանապարհորդ, Ալբիր Տըվըլէ ճանապարհորդելով Հայաստանի զանազան կողմերը, հետեւեալ կերպով է նկարագրում ս. Կարապետի նշանաւոր վանքը, որ քաղաքածօրէն տպագրել է «Հանդէս Ամսօրեայ» ամսագիրը։

«Զանչը-քիլիսէի (զանկաւոր եկեղեցի) անունն է ըստ Հայոց Ս. Կարապետ, որով կը կոչեն Հայք զՍ. Յովհաննէս Մկրտիչ։ Ս. Գրիգոր Լուսաւորիչ հիմնած է այս վանքը. բայց շատ անգամ փլած ապերած երկրաշարժով՝ միշտ ալ նորոգված է մի և նոյն ծրագրով՝ վերջին անգամ 1787-ին։

«Վանքը կառուցուած է լերաց կողին վրա՝ որ կիչխեն Մշոյ դաշտին հիւսիսակողմեան և այն լեռնօղակին, որ դէպ ի հարաւ ձգվելով երկարելով՝ կը սեղմեն զԱրածանին իրենց լերանցամէջքին մէջ ի Կենճ։ Մենք որ կիջնայինք երաշտին ու ամայի լեռնադաշտերէն՝ Ս. Կարապետի վանքն՝ միայնակ ու գրեթէ զանխուլ ինկած մէկ անկիւնը՝ մեղի երևցաւ իբրև խաղաղաւէտ առանձնարան մը մարած շիջած հին քաղաքակրթութեան քանի մը յետսակեացներու։ Անգամ մ'որ գտած է զինքն աչքը՝ ալ հայեցուածքն չի հեռանար այն զանգակատներէն որ այնպէս խիստ տուերարկված են ի մայր խոնարհած արեւու ջերմասփիւռ նշոյլներէն, և հաճութիւն կը զգայ իւր ծրագիծ շրջանակը նկատելու որ կաղնեաց անտառաց կանաչութեան մէջէն որոշ դուրս կը ցցուի։ Սակայն անհետ կը կորսուի նոյն յափշտակիչ տեսարանն երբ կը մերձենաս։ Շինուածքն ու որմունքն անխնամ պահված կալուածատան մը կը նմանին։ Եւ երբ մտնենք դռներէն մէկէն ներս՝ աւելի տխուր է աղդեցութիւնը։ Երկու բակեր վանատան այսպէս ըսենք գաւիթը կը կազմեն, որոնց միայն՝ հիւսիսակողմն՝ կը կցին անտաշ անկոփ քարերով կառուցուած յոռի շինութիւնք, ուր դոքն է. միւսին՝ արևելակողմն՝ կից է մէկ կողմանէ թերատ շինուածք մ'որ այժմ արդէն գրեթէ աւերած է և որ դպրոց պիտի ըլլար, և Ս. Գրիգորի Լուսաւորչի հինաւուրց փոքր մատուռն և միւս կողմանէ վանատան մէկ ճակատն կից ներքնագաւթին ուր է եկեղեցին։ Այս գաւիթը կը պատեն մէնդաստիկոն կամարակապ խցիկներ, ուր եպիսկոպոսին և վարդապետաց բնակարանքն են, ուր են նաև դպրոցի, ուխտաւորաց և վանքին այլ պիտոյից կարևոր տեղերը։ Ասոնց ամէնուն ծածկն ալ հարթաձև է, և բովանդակը նսեմ, անփայլ ու խաթարուած։

«Եկեղեցին հայկական ոճ ունի, որ անփոփոխ միակերպ է։ Ուղղանկիւնի և գրեթէ չորեքկուսի դիմաւոր մարմինը՝ որ քանի մը մանրապատուհաններ ունի, կը բառնայ իր վրա երեք գմբէթ, որոնց երկուքը՝ սրածայր սալածածկ տանիքք ուր գօսացած խոտ կը բուսնի, կը լուսաւորեն ներքսակողման մասերունքն. իսկ երրորդն՝ անգմբեթ՝ կը լուսաւորէ նաւամէջն եկեղեցւոյն իր մանրաչափ լուսամուտներով։ Ոչ մեծութիւն կայ, ոչ ազատարուեստ համարձակութիւն, ոչ վայելչութիւն։ Բաղմաթիւ խաչանիշներու և ուխտաւորաց քանդակած յուշագրութեանց մէջ հազիւ կը տեսնուին քանի մը զարդաձեւեր՝ հիւսկէն և բաւական նուրբ քանդակուած որ լուսամուտներու չորս կողմը կը պատեն։ Ներքին կողմն մթին է և մերկ։ Հաստաբետ են սիւնները, իսկ գորգերն շատ խեղճ, ուր կը ծնրադրեն հաւատացեալք։ Սակայն ներքսակողմը կը շողայ խորանն ոսկեզօծ տախտակամածովն և այլ նուիրական իրեղինաք։ Խորանին երկու կողմն ալ մանրադրունք կան, ուստի կը մտցուի երկու մատուռ. ձախակողմն է Ս. Ստեփանոսի մատուռը, որ ճոխ զրուագուած է տախտակամածով, որ իբր յիսուն տարի յառաջ շինուած է ի Վան, և որուն ոսկեգոյնը կը փալփլի պայծառութեամբ այն կիսամութ աղօտութեան մէջ։ Մատրանս մէջ կը հանդչին Ս. Ստեփանոսի նշխարք, և հոս է նաև Սմբատայ Մամիկոնեան զօրավարի դամբանը։

«Աջակողման մատրան մէջ է Ս. Յովհաննու Մկրտչի գերեզմանն, որ միշտ կը մնծարուի. այս ալ զրուագուած է նոյնպիսի ոսկեզօծ տախտակամածով. մատրանս մէջ կը հանդչի Ս. Յովհաննու Մկրտչի նշխարաց մի մասն, և Ս. Աթանագինեայ հայ եպիսկոպոսին մարմինն, որուն գերեզմանը գրեթէ ծածկուած է բարեպաշտից նուիրաբեր. մուտքին քով քար մը կը ցուցընէ այն տեղն ուր քաջաց քուրը կը նստէ Գայլ Վահան Մամիկոնեան սպարապետն՝ Սմբատայ հայրը։ Ուրիշ երկու մատրունք ալ կան նախընթացից աջ ու ձախ կողմն, որ քիչ անգամ կը բացուին. մին՝ Ս. Գրիգորի մատուռը՝ ցած ու մութ մենարան մըն է, զոր Ս. Գրիգորի աղօթարանը կը համարին։

«Եկեղեցին շատ անգամ կործանուած ու նորոգուած ըլլալով՝ հնագոյն շինութենէն միայն արտաքին պատը մնացած է։ Այս որմոյն մէջ ագուցված են մեծամեծ քարակոտորք՝ ճոխաքանդակ խաչերով և հին հայ լեզուաւ գրեթէ անընթեռնլի արձանագրութեամբք խճողված։ Զանգրի կալուածքներն անչահ կը մնան, ուստի և վանքը պարզք ալ ունի։ Սակայն եթէ տնտեսուին այս հողերը կրնան ամէն ծախք լեցընել. անբաւ տարածութիւն ունին այս կալուածք (—ժամեր պէտք է ձիով կորելու անցնելու այս երկիրները.—) և են հատանելի անտառներ, վարելի հողեր և բուսաբեր մեծատարած լեռնադաշտեր։ Բայց գրեթէ անմշակ կը մնան, և վանքին ամենամեծ ծախքն է բնակչաց և ուխտաւորաց պէտք եղածին չափ ցորեն հայթայթել։ Այժմ երեք ագարակ ունի վանքը, 1000 գլուխ այծ ու ոչխար, 100 գլուխ եզ ու կով, 60 գոմէշ, 20 ձի, 20 էշ ու 4 ջորի։ Հոս կայ 150 ծառայ։

Ահա այս է հայ վանք մը։ Աւելորդ է կարծեմ տալ հոս ուրիշ մանրամասնութիւններ՝ ցուցընելու թէ ինչ միակերպ, ծոյլ, ձանձրանալի, անգործ ու տխուր կեանք է անոնց որ կանցընեն ի Զանգը իրենց օրերը տխրագին։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բերլինի լրագիրները ողեւորված յօդուածներ են գրում այն միտքը յայտնելով, որ երկու կայսրների սրտագին տեսակցութիւնը խաղաղութեան հաստատ գրաւական է։

—Պարիզից հեռագրում են, որ երբ Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ այցելեց Դոմրեմի՝ ծանոթ Դ'Արկի տունը, ժողովուրդը համակրական ցոյցեր արեց նրան։

—Նախագահ Կարնօ շնորհակալութիւն է յայտնել չէխական ուսանողներին՝ Նանսիի տօնախմբութիւններին մասնակցելու համար։

—Ադգանիստանում, «Mémorial Diplomatique» լրագրի խօսքերով, Մախդիի նման մի նոր մարգարէ է յայտնվել։ Այդ ֆանատիկոս-մօլլայի բոլոր ջանքերն ուղղված են անգլիական տիրապետութեան դէմ Հնդկաստանում։ Հռետորական մեծ տաղանդ ունենալով, նա արդէն կարողացել է համոզել մի քանի ցեղերին ապստամբել անգլօ-հնդկական կառավարութեան դէմ։

—Բաղդադից նոյն լրագրին հաղորդում են, որ Տիգրիսի հովտում մի վտանգաւոր ապստամբութիւն է ծագել։ Արաբները, ապստամբելով օսմանեան կառավարութեան դէմ, բռնեցին Թիւրքաց մի նաւ Բաղդադի և Բասրայի մէջ։ Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ ապստամբները անարգել կերպով թոյլ են տալիս անցնել այն բոլոր նաւերին, որոնք գնում են անգլիական դրօշակի տակ։ Ապստամբված արաբները զինաւորված են Մարտինի հրացաններով։ Զէնքեր ստացել են նրանք Հնդկաստանի անգլիական ֆիրմաներից։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 յունիսի։ Մինիստրական մասնաժողովը թոյլ տուեց Լօնդօնի «Հրէական գաղթական ասոցիացիա» ակցիօներական ընկերութիւնը, որն ունի 50 միլիօն դրամագլուխ, սկսել իր գործունէութիւնը Ռուսաստանում՝ իրան ենթարկված մասնաժողովների միջոցով.—կենտրոնականը կը լինի Պետերբուրգում, իսկ տեղականները՝ միւս քաղաքներում։

ԲԱՐՑԵԼՕՆԱ, 1 յունիսի։ Քաղաքը պաշարման դրութեան մէջ է, զինուորական իշխանութիւնը կենտրօնացնում է զօրքը. դրութիւնը առաջվայ նման ծանր է։

ԼՕՆԴՕՆ, 1 յունիսի։ «Saint Leo» նաւը երէկ ճանապարհ ընկաւ Բրուկլինից՝ մթերքներով բեռնաւորված, որը ուղարկվում է ռուս սովեալների համար։

ԲՈՒԽԱՐԱ, 1 յունիսի։ Այսօր տեղի ունեցաւ Բուխարայում Մոսկվայի միջազգային առևտրական բանկի բաժնի բացումը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յունիսի։ Հրատարակված է պետական խորհրդի որոշումը՝ միջին-ասիական շուկաները և նոյնպէս Անդրկասպեան շրջանով Պարսկաստան արտահանվող չաքարի վրա ակցիզի վերադարձնելը վերացնելու մասին։

ԱՐԷՆԲՈՒՐԳ, 2 յունիսի։ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչն դիմաւորելու համար հասան այստեղ Լիֆլիանդիայի նահանգապետը և Բալտեան նաւատորմի հրամանատար Մակարով. Արէնսբուրգի աղգաբնակութիւնը պատրաստութիւններ է տեսնում դիմաւորելու Նոցա Բարձրութիւններին. տները զարդարված են դրօշակներով և զարդերով։ Նոցա Բարձրութիւնները կայցելեն ուղղափառ եկեղեցին և զօրքերը տեսնելուց յետոյ, կը կայանայ տեղական աղնուականութեան պատրաստած ճաշը։

ԱԴԷՆ, 2 յունիսի։ Աբիսինիայի ռուս հետազօտողը, պօրուչիկ Մաշկով, հասաւ իր ուղեկիցներով Ֆրանսիական Ջիբուտի կայարանը. նա տանում է Մէնէլիկի նամակները եւրոպական թագաւորներին։

ԹԷՀԵՐԱՆ, 2 յունիսի։ Հինգշաբթի Մէշհեդում խօլերայից մեռան 400 մարդիկ։

ՎԻԼԴՊԱՐԿ, 2 յունիսի։ Այստեղ ժամանեց չվէդական թագաւորը, որին դիմաւորեց կայսրը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Յունիսի 2-ին]

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	95 ր.	70 կ.
Բերլին վրա 100 մարկ — . .	46 ր.	85 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 »	95 »
Ոսկի — — արժէ . .	7 »	67 »
Մաքսայի կուպօններ — . .	152 »	50 »
Արծաթ — — — . .	1 »	10 »
Բօրսային դիսկօնտեր — . .	4 »	5½ »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . .	103 »	25 »
— — — — 2-րդ —. .	103 »	12 »
— — — — 3-րդ —	— »	— »
— — — — 4-րդ —	— »	— »
— — — — 5-րդ —	— »	— »
— — — — 6-րդ —	102 »	75 »
6% ոսկեայ րէնտա	157 »	25 »
4% ոսկեայ փոխառութիւն. . . .	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	103 »	— »
— — — 3-րդ —	105 »	37 »
Ներքին 5% առաջին փոխառութ.	241 »	50 »
— — երկրորդ —	221 »	50 »
Պետական երկաթուղային րէնտա.	104 »	25 »
5½% րէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան . . .	95 »	— »
5% դրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	102 »	50 »
Ազն. կալ. բանկի խաղարկութեան դրաւ. թղթ. — — .	193 »	50 »
5½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	104 »	50 »
4½% դրական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	148 »	25 »
— — — թղթադ. .	102 »	25 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները. .	102 »	12 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	50 »
Օդէսայի — — .	102 »	12 »
Թիֆլիսի — — .	98 »	50 »
Դրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	102 »	50 »
— — Քութայիսի — .	102 »	50 »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Ժամանակաւոր-խմբագիր՝ Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ

Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԹԱՏՐՕՆՈՒՄ

Ա.յսօր, հինգշաբթի, յունիսի 4-ին

ԵՐԳԻԶ Ն. ՉԱՀԼԱՄԵԱՆ

ԿԸ ՏԱՅ ԻՐ ՎԵՐՋԻՆ

ԿՕՆՑԵՐՏԸ

Սկիզբը $8^1/_2$ ժամին:

Տոմսակները վաճառվում են Ս. Սուսանաճեանի երաժշտական վաճառատունը: Կոնցերտի դաշնամուրը Սուսանաճեանի վաճառատնից է:

(№ 62) 1—1

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ

Ես ի ներքոյ ստորագրեալս յայտնում եմ, որ իմ եղբայր՝ Գրիգոր Իվանովիչ Միրզոյեվը, որ այժմ բացակայ է Թիֆլիսից, իր և իմ կողմից նրան տուած հաւատարմագրի հիման վրա տուել էր Ալէքսանդր Իվանովիչ Մանթաշովին Մի Մուրհակ քառասուն հազար ռուբլու (40,000 ռ.) ապրիլ 26-ին. 1884 թ. ցպահանջ. իսկ վերջինս իր կողմից անվերադարձ (по безоборотной надписи) մակագրութեամբ յանձնել էր եղբօր Գրիգորեվիչ Փրիդմնովին (որը վախճանվել է այս տարի փետրվար ամսին): Փողերը մեր կողմից վճարելուց յետոյ ե. Գ. Փրիդմնովը տալիս է յիշեալ մուրհակը մեր նախկին կառավարիչ ԴԱՒԻԹ ՍՏԵՓԱՆՈՎԻՉ ԴԱՒՐԻՇԵՎ, ԿԱՍՊԱՐՕՎՍԿՈՒՆ, որպէս զի յանձնէ մեզ ոչնչացնելու, բայց պ. Դաւրիշեվը յիշեալ մուրհակը կորցրել էր առանց ջնջելու ստորագրութիւնները և պատառելու. ի հաստատութիւն որոյ պ. Դաւրիշեվ ունի մեզ տուած ստորագրութիւն հաստատված Թիֆլիսի նոտար Պոլտարացկու գրասենեակում 14-ին նոյեմբերի 1891 թ. ընդ № 6733:

Ներկայումս վերոյիշեալ մուրհակը գտնվում է ՏՕՀՄԱԿԱՆ ՊԱՏՈՒԱՒՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԲՐԻԷԼ ՍՕԼՕՄՈՆՕՎԻՉ ՊԱՐՈՒՆԵԼԳՕՎԻ ՄՕՏ: Որպիսին ինձ վերադարձնելու և ոչնչացնելու համար դիմել եմ նրան նոտարական յայտարարութեամբ սոյն մայիսի 23-ին:

Այս բոլորի համար ես իմ պարտաւորութիւնս եմ համարում յայտարարել ի գիտութիւն ընդհանրութեան, որպէս նախազգուշացումն կատարվելիք գործողութեան այդ վերոյիշեալ մուրհակի վերաբերմամբ:

Մելքո Իվանովիչ Միրզոյեվ

Մայիսի 30-ին 1892 թ., Թիֆլիս. (№ 61) 1—2

Թիֆլիսի ս. Նշան եկեղեցու երեցփոխանի և հաշուատեսների եռամեայ ժամանակամիջոցը լրացած լինելով, հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ որոշված է յունիսի 7-ին, կիրակի օրը, ժամը 12-ին ս. պատարագից յետոյ կատարել նոր երեցփոխանի և հաշուատեսների ընտրութիւնը: Ուստի յիշեալ եկեղեցու մեծ. ծխականները հրաւիրվում են նոյն օրը յիշեալ եկեղեցին ընտրութեանը մասնակցելու:

Թիֆլիսի եկեղեցիների բարեկարգութեան վերատեսուչ՝ Յովհաննէս քահանայ Մարտիրոսեան: 2—2

Աքսորված Ալէքսանդր Խոսրօեվի կալուածների խնամատարը (опекунъ), կալուածների, որոնք գտնվում են Թիֆլիսում և Երևանում (Զարափխանա և Զուլֆի քարվանսարաները) խնդրում է դրանց վարձողներին փող չը վճարել փոխված օպեկուն Նիկոլայ Տէր-Սարգիսովին և նրանց հաւատարմատար Պետրոս Խոսրօեվին:

(№ 61) Օրբելեան փողոց, տ. № 4, խնամատար Իվ. Իվանով. 2—2

Ա. Մուղդուսի ցակոբեանցի գործարանում պատրաստվում են ամենաէժան գներով ամեն տեսակ քարեր լիթոգրաֆիայի համար: Օտարաքաղաքացիք դիմում են հետևեալ հասցէով. Шуша, Типо-литографію Мугдусіакопова. 3—4

ԱՍՖԱԼՏԻ ԻՐԵՂԷՆՆԵՐ ԵՒ ԱՍՖԱԼՏԻ ՈՒ ԳՈՒՏՐՕՆԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Սիզրանի ասֆալտի գործարանի Բարձրագոյն հաստատված ընկերութեան ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԹՈՒՄՈՒՄ: Ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով.

ԹԻՖԼԻՍ. Ալէքսանդրեան փողոց, № 50, Ի. Մ. Չերնեաեվին:

ԲԱԹՈՒՄ. Սադովայա փողոց, № 3, պ. Սուխանովին:

№ 24 7—15

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վ.օրմնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան (և առամնացաւի) սիֆիլիսի և աչքացաւի

Դ. Գ. ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.

Մ. Զ. ՔԱՆԱՆԵԱՆ—12—$12^1/_2$ ժ. կանանց ց. և մանկաբարձութեան:

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—$12^1/_2$—1 ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Բ. ԱԼԵԿՍԷՅԵՎ—5—6 ժ. նեարդային ց. և էլեկտրաբուժութեան:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երեխայոց և ներքին ց.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.

Ա. Ա. ԳԱԴՕՄՍԿԻ—6—7 ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.

Վճար—50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) համար առանձին:

24—52 (?) 90—№ 79 Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ Նաւասարդեան

ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ

Թիֆլիս, Սօլօլակսկայա փողոց, տուն Աղաբաբօվի, Ամառնային զործնական հիւսուածքներ, ձեռքի պատրաստութեան՝ տիկինների զգեստների, մանուկների զգեստների և պարոնների շապիկների համար:

Մեծ ընտրութիւն լայն սարպինկաների՝ նախշով:

Սարպինկայի զուլպաների թել, սադա, գոյնզգոյն: Ներկերը տեսողական են:

Սարպինկայի զգեստներ արկղներում 3 ռուբլուց սկսած մինչև 60 կոպէկ:

Սարպինկայի խրքիաներ 1 ռ. 80 կ. և աւելի թանգ:

Սարպինկայի քթի աղլուխներ և գլխի թաշկինակներ:

ՖԱԲՐԻԿԱՆՏՆԵՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԲԷՆԴԷՐ ԵՒ ՍՏԵՊԱՆՕՎ

(№ 47) 13—30

Պետերբուրգի հայ ուսանողների հեռաւոր հրատարակութիւնների պահեստը փոխադրված է Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցը, ուր և կարող են դիմել ցանկացողները:

ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԳԻՐՔ, գինն է.	2 ռ.
ԳԱՐԻԲԱԼԴԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ (սակաւաթիւ)	1 „
ՓՈՔՐԻԿ ԼՐՏԵՍԸ	— „ 2 կ.
ԱԶՕ ՄԱՐՈՒՆ	— „ 3 կ.

№ 54 6—8

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

ՀԱՄԱԶԱՍՊ ՕՐԲԷԼԻ

Սօլօլակսկայա փողոց, սեփական տանը №№ 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 12 ժամից մինչև 2 ժ. և երեկոյեան 5 ժամից մինչև 7 ժ. Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ:

(№ 145) 55—150

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMIECKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ գտնվում է **ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ**, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նոմէրներ-որոնց սաքք ու կարգը ամենալաւ պատասխանեան հիւրանոցների սենեակներին է նման: Նոմէրների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով: Հիւրանոցում կայ ընթերցարան-զրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ ըէստորան, տելեֆոն, քաղցրեղէնների խանութ, բաղնիքներ:

Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում:

(№ 21) 22—130 (2·)

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՕՖԷՍԻՕՆԱԼ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՍԵՐ.

1) Հանդերձների և սպիտակեղէնի ձեւի դասեր Գլօդզինսկու մեթոդով և Շեդդերի ֆրանսիական մեթոդով:

2) Կարի դասեր մոդային ժուրնալներով:

3) Հարթակարի և զանազան ձեռագործերի դասեր:

4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու համար:

Վճարը ամսական 2 ռուբլի. երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկոյեան:

Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը ձրի: (№ 23) 26—40

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համարու ՄԱՏՋԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ առևտրական հաշուարարութիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսումնասիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղուսակներով, 1-ից մինչև 10,000 ռուբ. համար. 1%-ից մինչև 12%. Վաճառվում է եղբարց Յովիանովների բանկային գրասենեակում և հեղինակի մատ. Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով С. П. Мануэльянцу.

Գինն է 1 ռուբլի: Փոստի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի: 98—150

(9—№ 95)

ԷՎԷԼԻՆԱ

ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆՈՒ վէպ (Հոդերանական էտիւդ).

Գինը 50 կոպէկ (պօստի ծախսով)

Ծախվում է. „Մշակի“ խմբագրատանը, կենտրոնական և թիֆլիսի գրավաճառանոցներում և Միքայէլեան կամուրջի վրա գտնվող Յովհաննէսօվի գրավաճառանոցում.

(№ 126) 18—20



ՄԻԶՈՑ **ԽԱՐԲՈՒԽԻ** ԴԷՄ բժշկական դեպարտամէնտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

Ծախվում է 40 կոպէկով

Դեղագործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլիսում: № 12 29—40

ԵՂԲ. ԿՐԵՍՏՕՎՆԻԿՕՎՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿ.

ՊԱՀԵՍՏՈՒՄ, ԲԱԳՈՒՈՒՄ

Ստացված է ԿՈՎԻ ԻԻՂ, լաւ տեսակի:

Վաճառվում են մեծ քանակութեամբ: Երեքից մինչև 16 պուդ տակառներով:

Հասցէն նամակների համար. Фабрично-торговому товариществу Бр. Крестовниковыхъ, въ Баку.

Հեռագիրների համար. Баку, Крестовниковымъ. (№ 55) 6—8

Дозволено цензурою, Тифлисъ, 3 Іюня 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. кас.